ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

«ՀՌԱՀ-ԳՀԾՁԲ-18/3» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՈՒՄ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան **30.01.2018թ.**
Ժամը 11:00

«ՀՌԱՀ-ԳՀԾՁԲ-18/3» ծածկագրով գնանշման հարցում գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի գնահատման արդյունքների հաստատման մասին.

1. *Հայտերի գնահատման արդյունքները՝ հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության մասին.*

«ՋիԷնՍի-Ալֆա» ՓԲ ընկերության կողմից գնանշման հարցման գնման ընթացակարգին ներկայացված հայտը համապատասխանում է հրավերով սահմանված պահանջներին և գնահատվում է բավարար:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

2. *Առաջին տեղը զբաղեցրած մասնակցին ներկայացվող պահանջները.*

Առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը՝ «ՋիԷնՍի-Ալֆա» ՓԲ ընկերությունը հանձնաժողովին է ներկայացրել իր գնումներին մասնակցելու իրավունքը և հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

3. *Ներկայացված փաստաթղթերի համապատասխանության գնահատումը, գնային և ոչ գնային (տեխնիկական) առաջարկի հիմնավորվածությունը.*

Հանձնաժողովը բավարար է գնահատել 2-րդ կետի համաձայն ներկայացված փաստաթղթերի (տեղեկությունների) համապատասխանությունը հրավերով սահմանված պահանջներին, մասնակցի գնային և ոչ գնային (տեխնիկական) առաջարկի հիմնավորվածությունը:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

4. *«ՀՌԱՀ-ԳՀԾՁԲ-18/3» ծածկագրով գնանշման հարցում գնման ընթացակարգի գնահատման արդյունքների հրապարակում.*

Հանձնաժողովը որոշեց՝ ընտրված մասնակից ճանաչել «ՋիԷնՍի-Ալֆա» ՓԲ ընկերությանը և պայմանագիր կնքելու նպատակով առաջարկել ծանուցվելուց հետո 10 (տասը) աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել պայմանագրի ապահովում պայմանագրի գնի 10 (տասը) տոկոսի չափով՝ միակողմանի հաստատված հայտարարություն՝ տուժանքի կամ կանխիկ փողի ձևով:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն անգործության ժամկետը 5 (հինգ) օրացուցային օր է:

Ընտրված մասնակցի հետ կարող է կնքվել պայմանագիր «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասի, 36-րդ հոդվածի և մրցույթի հրավերում նշված պահանջներին համապատասխան գնման պայմանագրի գնի 10%-ի չափով պայմանագրի կատարման ապահովումը տուժանքի կամ կանխիկ փողի ձևով ներկայացնելու դեպքում:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

5. Նիստին ներկա հանձնաժողովի անդամների անունները և ազգանունները.

Հանձնաժողովի նախագահ՝ (ԳՊ/ԳԱՊ)

ՀՌԱՀ աշխատակազմի իրավաբանական և լիցենզավորման վարչության պետ — Դ. Մարգարյան

Հանձնաժողովի քարտուղար՝ (ԳՊ/ՄՀՄ)

ՀՌԱՀ աշխատակազմի գործերի կառավարչության գլխավոր մասնագետ, գնումները համակարգող — Ա. Մատինյան

Հանձնաժողովի անդամ՝ (ԳՊ/ԳԱ)

ՀՌԱՀ աշխատակազմի իրավական ապահովման բաժնի պետ — Ա. Ներսիսյան

Հանձնաժողովի անդամ՝ (ԳՊ/ԳԱ)

ՀՌԱՀ աշխատակազմի ծրագրերի մոնիտորինգի և վերահսկողության վարչության պետի տեղակալ — Լ. Շահբազյան

Հանձնաժողովի անդամ՝ (ԳՊ/ԲԱ)

ՀՌԱՀ աշխատակազմի միջ. կապերի, տեղեկատվության և զարգացման ծրագրերի բաժնի գլխավոր մասնագետ — Գ. Դարբինյան

Հանձնաժողովի անդամ՝ (ԳՊ/ԲԱ)

ՀՌԱՀ աշխատակազմի անձնակազմի կառավարման բաժնի առաջատար մասնագետ — Է. Գրիգորյան